

ԱՐԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՀԱՏՈՐ 9
2017

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԱԲԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նվիրվում է արաբագիտության ամբիոնի դասախոսներ
Սարգիս Պողոսյանի, Հովհաննես Ասատրյանի և Հարություն
Գրիգորյանի լուսավոր հիշատակին

№ 9

ISSN 1829-4510

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

YEREVAN STATE UNIVERSITY

JOURNAL
OF
ARABIC STUDIES

In the memory of
Sargis Poghosyan,
Hovhannes Asatryan,
Harutyun Grigoryan

№ 9

ISSN 1829-4510

YEREVAN
YSU PRESS
2017

Հրատարակվում է
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Դավիթ Հովհաննիսյան – ր.գ.թ., պրոֆեսոր (նախագահ)

Մարգարիտա Խաչիկյան - ր.գ.դ., պրոֆեսոր

Ռուբեն Կարապետյան - պ.գ.դ., պրոֆեսոր

Արշակ Փոլադյան - պ.գ.դ., պրոֆեսոր

Գուրամ Զիկովանի - ր.գ.դ., պրոֆեսոր (Վրաստան)

Մամվել Կարաբեկյան - ր.գ.թ., դոցենտ

Մուշեղ Ասատրյան –PhD (Կանադա)

Սոնա Տոնիկյան – ր.գ.թ., դոցենտ

Մարատ Յավրույան - ր.գ.թ., դոցենտ

Հայկ Քոչարյան – պ.գ.թ., դոցենտ

Արայիկ Հարությունյան - պ.գ.թ.

Published by the decision of the scientific
council of the Oriental Studies
Department, Yerevan State University

Editorial Board

Prof. David Hovhannisyan (editor in chief)

Prof. Margarita Khachkyan

Prof. Ruben Karapetyan

Prof. Arshak Poladyan

Prof. Guram Chikovani (Georgia)

Dr. Samvel Karabekyan

Mushegh Asatryan, PhD (Canada)

Dr. Sona Tonikyan

Dr. Marat Yavrumyan

Dr. Hayk Kocharyan

Dr. Arayik Harutyunyan

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ..... 11

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Աննա Դանիելյան

ԶԵՂԶՈՒՄԸ ՆԿԱՐԱԳՐՈՂ ԵԶՐՈՒՅԹՆԵՐՆ ԱՐԱԲԵՐԵՆԻ
TAXFİF ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 13-27

†
Խաղիջե Ահմադ Մեհրաբի, Աննա Դանիելյան
ՀԱՐԱԿՑԱԿԱՆ ՄԱՍՆԻԿԻ ԵՎ ՀԱՐԱԿՑՎԱԾ ԱՆՎԱՆ
ԶԵՂԶՈՒՄԸ ՂՈՒՐԱՆՈՒՄ..... 28-46

Հայկ Հարությունյան

ՀԱՐՖԸ՝ ՈՐՊԵՍ ՀՆԶՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ
ՄԱՍՆԻԿ ԱԼ-ԽԱԼԻԼ ԻԲՆ ԱՀՄԱԴԻ «ՔԻԹԱԲ ԱԼ-ԱՅՆ»
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ..... 47-59

Մարգարիտա Մարգարյան

ՄՈՒՆԻՍԻԿԱԿԱՆ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ
ԶԵՎԱ-ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐԸ..... 60-72

Մերվաթ Ջումա Արդալլահ Օսման

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՐԱԲԱԿԱՆԱՑՄԱՄԲԶԲԱՂՎՈՂ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՐԱԲԱԿԱՆԱՑՄԱՆ
ՔԵՆՈՒՆԿԱՐՆԵՐԸ..... 73-81

Մերվաթ Ջումա Արդալլահ Օսման

ԱՐԱԲԱԿԱՆԱՑՄԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՆԳՐՎԱՆՆԵՐԸ.....82-97

Նիկոլայ Գաբրիելյան

ՄԱՍԴԱՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԱԾԱԿԱՆԻ ԽՆԴԻՐՆ

ԱՐԱԲԵՐԵՆՈՒՄ.....98-106

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արու Ջաիդ Ալի Մուսա

«ՀԱՄԱՍ» ՇԱՐԺՄԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՊԱՂԵՍՏԻՆԻ

ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՍԼՈՅԻ

ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ.....107-131

Անի Դավթյան

«ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

ՄԻՐԻԱՅՈՒՄ. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ

ԶԱԽՈՂՈՒՄԸ՝ ՎԵՐՁ ԴՆԵԼՈՒ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ

ՎԱՅԱՐԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ.....132-139

Արթուր Իսրայելյան, Ջարուհի Համազասպյան

ԽԱԶԱԿՐԱՑ ՀՈՒՇԱՐԶԱՆՆԵՐԸ ՏԱՐՏՈՒՄԻ, ԼԱԹԱՔԻԱՅԻ

ՀԱՄԱՅԻ ԵՎ ՀՈՄՄԻ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ.....140-146

Արսեն Ջուլֆալալյան

ԱԴԱՆԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ԹՈՒՐԳ-ՄԻՐԻԱԿԱՆ

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՆՉԵՎ 2002 Թ.....147-169

Գայանե Մկրտումյան

ՀԱՅՈՑ ԵՎԵՂԵՑԻՆ ՀԱՅ-ԱՐԱԲԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՉԱԿԵՏՈՒՄ.....170-183

Էդիտա Ասատրյան

ԵԳԻՊՏԱ-ՍԱՌԻՂԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՄԵՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄԸ.....184-199

Խաչիկ Ազիզյան

ԵԳԻՊՏՈՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
ՍՈՒՀԱՄՄԱԴ ԱԼԻԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ.....200-218

Մարիամ Էլմասյան

ԱԲՂԱԼԼԱՀ ԻԲՆ ԱԼ-ՍՈՒԿԱՏԱՅԻ ԴԵՐԸ
ՆՈՐ ԳԻՏԵԼԻՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱԴԱՊՏԱՑՄԱՆ
ԳՈՐԾՈՒՄ.....219-235

CONTENT

FOREWORDS	11-12
-----------------	-------

LINGUISTICS

Anna Danielyan

THE TERMS FOR DESCRIBING ELLIPSIS IN THE CONTEXT OF TAXF^F CONCEPTION IN ARABIC LANGUAGE	13-27
---	-------

Khadijeh Ahmad Mehrabi, Anna Danielyan

ELLIPSIS OF PREPOSITIONS AND PREPOSITIONAL CONSTRUCTIONS IN THE QUR'ĀN	28-46
---	-------

Hayk Harutyunyan

HARF AS PHONETIC AND MORPHOLOGICAL PARTICLE IN «KITAB AL-AYN» OF KHALIL IBN AHMAD	47-59
--	-------

Margarita Sargsyan

ABOUT THE MORFOSYNTACTIC AND SEMANTIC PECULIARITIES OF THE VERB-LIKE PARTICLE 'INNA	60-72
--	-------

Mervat Juma Abdallah Othman

THE ORGANIZATIONS WORKING ON THE ARABIZATION OF SCIENCES IN ARAB COUNTRIES AND THE PERSPECTIVES OF THE ARABIZATION	73-81
--	-------

Mervat Juma Abdallah Othman

HISTORIC MILESTONES OF ARABIZATION	82-97
--	-------

Nikolay Gabrielyan

THE PROBLEM OF EXPRESSING THE ADJECTIVE
VIA MASDAR IN ARABIC.....

98-106

HISTORY AND LITIRATURE

Abu Zayd Ali Musa

THE POSITION OF THE HAMAS MOVEMENT REGARDING
THE PALESTINE LIBERATION ORGANIZATION AND
THE OSLO ACCORDS.....

107-131

Ani Davtyan

RESPONSIBILITY TO PROTECT IN SYRIA: THE FAILURE
OF INTERNATIONAL COMMUNITY TO STOP THE MASS
ATROCITIES.....

132-139

Artur Israyelyan, Zaruhi Hamazaspyan

CRUSADER MONUMENTS IN TARTUS, LATAKIA, HOMS
AND HAMA GOVERNORATES OF SYRIA.....

140-146

Arsen Julfalakyan

ADANA AGREEMENT AND TURKISH-SYRIAN
RELATIONS BY 2002.....

147-169

Gayane Mkrtyumyan

ARMENIAN CHURCH IN THE MIDST OF
THE ARMENIAN-ARAB RELATIONS.....

170-183

Edita Asatryan

THE EGYPTIAN-SAUDI CONFRONTAION AND
THE CIVIL WAR IN NORTH YEMEN (1962-1970).....

184-199

Khachik Azizyan

THE REFORMS IMPLEMENTED BY MUHAMMAD ALI IN
THE STATE MANAGEMENT SYSTEM OF EGYPT.....200-218

Mariam Elmasyan

ABDALLAH IBN AL-MUKAFFA'A AND HIS ROLE IN FORMATION
OF THE NEW KNOWLEDGE AND ITS ADAPTATION.....219-235

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅ-ԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԻԶԱԿԵՏՈՒՄ

Գայանե Մկրտումյան
պ. գ. թ., ԵՊՀ արարագիտության
ամբիոնի ասիստենտ
mkrtumyangayane@rumbler.ru

Բանալի բառեր՝ հայոց եկեղեցի, հաշտության բանակցություններ, նվաճողական քաղաքականություն, դավանանքի ազատություն, գրավոր երդմնագիր, եկեղեցին ազատել հարկերից, քրիստոնյաների իրավունքների սահմանափակում, դաշնագիր,

Հայոց եկեղեցին իր ստեղծման ժամանակից ի վեր կանգնած է եղել հայոց պետականության կայացման հիմքում, իր ազգանվեր առաքելությամբ աջակցել ու սատարել հայոց պետության բոլոր ձեռնարկումներին: Երբ Հայաստանն ընդունեց քրիստոնեությունը որպես պետական կրոն՝ 301 թ.-ին, երկրի արտաքին քաղաքականության ղեկավարի դերում հանդես էր գալիս ոչ միայն հայոց արքան, այլև հայոց եկեղեցու առաջնորդը՝ հանձին կաթողիկոսի: Աստիճանաբար հայ հոգևորական դասը սկսում է մեծ դեր խաղալ դիվանագիտական հարաբերությունների ասպարեզում՝ որպես դեսպաններ¹: Հայոց եկեղեցին դարեր շարունակ իր լուրջ դերակատարությունն է ունեցել Հայաստանի ներքին ու արտաքին կյանքում, և օտարերկրյա նվաճողներն էլ միշտ գիտակցել են այդ իրողությունը և փորձել Հայաստանը գրավելու համար առաջին հերթին ջլատել եկեղեցու ուժը: Դրավառ օրինակն է հայ հոգևոր դասի, երեցների մասնակցությունը

¹ Հայ ժողովրդի պատմություն, երկրորդ հատոր, պատ. խմբագիր՝ Երեմյան Ս., Երևան, 1984, էջ 77:

451թ. Ավարայրի ճակատամարտին: Նրանք էլ հայ նախարարների հետ մեկտեղ կանգնեցին հասարակ ժողովրդի կողքին՝ նահատակվելով հայրենիքի ազատության համար, որոնք «ոչ եթե մարմնական համարելին զկռին, այլ հոգեւոր առաքինութեան ցանկանային մահակից լինել քաջ նահատակացն»²:

Հայոց եկեղեցու պետականամետ գործունեությունը շարունակվեց նաև հետագայում՝ արաբական նվաճումների և տիրապետության հաստատման շրջանում: Արաբական նվաճումների նախօրյակին Ներսես Գ Տայեցի կաթողիկոսի (641-661թթ.) և հայ նախարարների խնդրանքով Բյուզանդիայի Կոստանդ 2-րդ կայսրը Թեոդորոս Ռշտունուն պաշտոնապես ճանաչեց Հայոց իշխան և «ետ նմա զնոյն իշխանութիւն զարավարութեան»³: Մոտ 650-651 թթ. Բյուզանդիան հաշտության բանակցություններ սկսեց Խալիֆայության հետ՝ գլխահարկ վճարելու պայմանով: Այս պայմանագրի կնքումը նշանակում էր, որ արաբական որևէ արշավանքի դեպքում Բյուզանդիան չէր կարող օգնել Հայաստանին: Այս քաղաքական անկայուն իրավիճակում Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունին վճռական քայլ է կատարում՝ խզելով իր կապերը Բյուզանդիայի հետ և դաշինք կնքելով Արաբական խալիֆայության հետ՝ հանձին Ասորիքի կուսակալ Մուավիայի: Թեև հայ նախարարներն աջակցում էին Հայոց իշխանին, սակայն հայոց եկեղեցու դիրքորոշումն այլ էր, որն արտահայտող Սեբեոս եպիսկոպոսն այսպիսի տողեր է գրում այդ դաշնագրի մասին, որ հայերը «եղին ուխտ ընդ մահու և ընդ դժոխոց դաշինս կռեցին»⁴: Այս հարցում Հայոց իշխանի գլխավոր հակառակորդը Ներսես Գ Տայեցի կաթողիկոսն էր: Մ. Օրմանյանն այս առնչությամբ շատ պատկերավոր գրում է. «Եկեղեցականաց

² Եղիշե, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Յերուսաղեմ, 1865, էջ 88:

³ Պատմություն Սեբեոսի, Երևան 1979, էջ 145:

⁴ Նույն տեղում, էջ 164:

կողմը Ներսես կաթողիկոսի գլխավորությամբ միշտ կրօնական տեսակետը ամուր բռնելով, հոգով չափ մը կը խորշէր իսլամական մերձավորութենէն, մինչ նախարարները Թեոդորոս սպարապետի գլխավորությամբ որեւէ կերպով ապահովութեան վիճակ մը կը փնտռէին, առանց իսլամութիւնը ընդունելու»⁵:

Վերոհիշյալ պայմանագրի համաձայն, որը կնքվեց 652 թ. -ին, Հայաստանը 3 տարով ազատվեց Արաբական խալիֆայությանը հարկ վճարելուց, որից հետո պետք է վճարեր այնքան, որքան որ կամենար: Հայերին իրավունք տրվեց ունենալ 15 հազարանոց հեծելազոր, երկրի բերդերում չէին լինելու արաբական կայազորներ: Այդ դաշնագիրը «երկու երկրների միջև կնքված առաջին դիվանագիտական պաշտոնական փաստաթուղթն էր, որը որոշում էր Հայաստանի քաղաքական իրավիճակը և սահմանում երկու կողմերի հարաբերությունների բնույթը»⁶:

Տեղեկանալով այդ պայմանագրի մասին, Կոստանդ 2-րդը փորձեց ստիպել հայերին հրաժարվել արաբների հետ մերձենալու քաղաքականությունից և Թեոդորոս Ռշտունուն հրավիրեց Կարին՝ բանակցությունների: Երբ վերջինս մերժեց այդ առաջարկը, կայսրը զորքով մտավ Հայաստան՝ հայերին պատժելու համար: Եվ կաթողիկոսը, որ մինչ այդ միաբանվել էր Թեոդորոս Ռշտունու հետ, հայ նախարարների հետ «անկան ի վերայ երեսաց իւրեանց. . . եւ մեծաւ աղաչանօք եւ արտասուայից պաղատանաւք խնդրեցին ողորմութիւն»⁷: Կայսրը անսաց նրանց թախանձանքին՝ բաց թողնելով իր զորքի մեծ մասը, սակայն Մուշեղ Մամիկոնյանին

⁵ Օրմանեան Մ, Ազգապատում, հայ ուղղափառ եկեղեցոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հ. Ա., մայր աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 840, (այսուհետ՝ Օրմանյան Մ., Ազգապատում):

⁶ Հովհաննիսան Ն. Արաբական երկրների պատմություն, հատոր առաջին, Երևան, 2003, էջ 83:

⁷ Պատմութիւն Սեբեոսի, էջ 166:

կարգեց «իշխան Հայոց հեծելոցն», որպեսզի նրան հակադրի Թեոդորոս Ռշտունուն, որին էլ նա զրկեց իշխանությունից: Հայաստանն, այսպիսով, բաժանվեց երկու թշնամական խմբավորումների: Եվ «անկախ Ներսես կաթողիկոսի դիվանագիտական նպատակով կատարած դավանանքային առերես զիջողականության, Կոստասը անշեղորեն շարունակում էր իրականացնել կայսրության նվաճողական քաղաքականության գիծը»⁸:

Երբ Կոստանդ 2-րդը հեռացավ Հայաստանից, նրա հետ Դվինից հեռացավ նաև Ներսես Գ Տայեցի կաթողիկոսը՝ վախենալով Թեոդորոս Ռշտունու վրեժից, և քաշվեց Տայոց աշխարհի իր հայրենի Իշխան գյուղը՝ հեռու պահելով իրեն եկեղեցական գործերից: Թեոդորոս Ռշտունու մահից հետո կաթողիկոսը, ըստ Լեոյի պատկերավոր արտահայտության. «իր կյանքի վերջում երես է դարձնում հույներից և հետևում իր հակառակորդ Թեոդորոս Ռշտունու քաղաքականությանը»⁹:

Նա հայ նախարարների հետ դիմում է Մուավիային, որ վերջինս Հայոց իշխան կարգի Գրիգոր Մամիկոնյանին: Խալիֆան ընդառաջում է նրանց ցանկությանը և բազում մեծարանքներով Գրիգոր Մամիկոնյանին ուղարկում Հայաստան:

Հայ-արաբական համագործակցության ընդլայնման հետագա փուլը կապված է Սահակ Ձորոփորեցի կաթողիկոսի (677-703 թթ.) գործունեության հետ, որը շարունակեց Թեոդորոս Ռշտունու քաղաքականությունը:

Այսպես, Հայաստանը 7-րդ դարում պահպանել էր իր ինքնուրույնությունը Բյուզանդական կայսրության և Արաբական խալիֆայության միջև եղած ուժերի հավասարակշռության

⁸ Դանիելյան Է. Հայաստանի քաղաքական պատմությունը և հայ առաքելական եկեղեցին (VI-VII դարեր), Երևան, 2000, էջ 230:

⁹ Լեո, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 1967, էջ 318:

շնորհիվ: Օմայյան Աբդ ալ-Մալիք խալիֆան (685-705 թթ.), ճնշելով խալիֆայության տարբեր շրջաններում ծագած խռովությունները, իրականացնում է մի շարք կարևոր միջոցառումներ, որոնց շնորհիվ ամրապնդվում է արաբական պետականությունը, և Օմայյաններն անցնում են արաբական նվաճումների ավարտման փուլին: Ըստ 8-րդ դարի պատմիչ Ղևոնդի՝ Աբդ ալ-Մալիք խալիֆայի իշխանության տասնվեցերորդ տարում, (այսինքն՝ 701 թ . -ին), Մուհամմադ իբն Մրվան գորավարը մեծ արշավանք է սկսում Հայաստանի դեմ¹⁰: Կարճ ժամանակահատվածում Հայաստանը նվաճվում է Մրվանի կողմից. գրավվում են նաև Վրաստանն ու Ադվանքը: Արաբները վերջնականապես կազմավորում են Արմինիա նահանգը՝ Դվին կենտրոնով: Մուհամմադը Հայաստանի առաջին կառավարիչ է նշանակում Աբու Շայխ իբն Աբդալլահին, որին հայ միջնադարյան պատմագիրներն անվանում են ‘Աբդլա: Ահա ինչ է գրում Հովհաննես Դրասխանակերտցին. «Եւ զկնի Մահմէտի այլ ոստիկան ՚ի Հայս առաքեցաւ Աբդլլահ անուն, այր ժանտ, ժպիրի և ապերասան»¹¹, որը կալանավորում և կտտանքներով տանջում էր հայոց իշխաններին: Նա, շղթայելով հայոց իշխաններին, Սմբատ Բագրատունուն և Մահակ կաթողիկոսին, ուղարկում է Դամասկոս ու սկսում իր կրոնական հալածանքները:

Արաբական խալիֆայությունը հեռահար նպատակ էր հետապնդում՝ ոչնչացնել հայ նախարարական դասը, քանի որ վերջինս խոչընդոտում էր նրան վերջնականապես նվաճել Հայաստանը: Ինչպես գրում է Ղևոնդը, այդ ծրագիրը հայտնի էր դարձել Հայոց իշխան Սմբատ Բագրատունուն և

¹⁰ Հմմտ. Ղևոնդ, Պատմություն, Երևան, 1982, էջ 29:

¹¹ Հովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 94, տե՛ս նաև Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հատոր առաջին, էջ 113:

նախարարներին¹²: Վերջիններս գաղտնի ժողով գումարեցին, սակայն այլ ելք չգտնելով՝ հեռացան դեպի Բյուզանդական կայսրություն: Տեղեկանալով այս մասին՝ Նախիջևանում գտնվող արաբական կայսրորդ սկսեց հետապնդել ապստամբ նախարարներին, և 703 թ. Վարդանակերտ անվանում երկու հակամարտող բանակները բախվեցին իրար: Պատերազան ավարտվեց հայերի հաղթանակով: Ըստ Ղևոնդի, «հայոց զորքերը՝ լիացած թշնամու ավարով, իրենց հաղթության ավետիսն առաքեցին հունաց թագավորին: Ավարից նրան ընծա ուղարկեցին արաբական ձիեր՝ ընտիր երիվարներ...»¹³: Կայսրը կուրոպաղատության աստիճան շնորհեց Սմբատ Բագրատունուն: Երբ արաբական բանակի պարտության լուրը հասավ Աբդ ալ-Մալիքին, նա անհապաղ իր եղբորը՝ Մուհամմադ իբն Մրվան զորավարին, ուղարկեց Հայաստան՝ արյան մեջ խեղդելու ապստամբությունները: Ղևոնդը գրում է. «Երբ Հայաստանի նախարարները լսեցին զորավար թշնամու գալուստը, պատրաստեցին Հայոց կաթողիկոս Մահակին և նրա հետ՝ մեր եպիսկոպոսներից ոմանց, որպեսզի ընդառաջ գնան Իսմայելի զորքերին՝ նրանց զորավարի հետ խաղաղության մասին բանակցելու և ընդունելու նրանց հպատակության լուծը»¹⁴: Հարրան հասնելով՝ կաթողիկոսը հիվանդացավ և, զգալով իր մոտալուտ մահը, նամակ գրեց արաբ զորավարին և խնդրեց իր մահից հետո այն հանձնել Մուհամմադին: Իր նամակում կաթողիկոսը հավաստում էր, որ հայոց ազգը պատրաստ է հպատակվել, դրա փոխարեն պետք է դադարեցվեր արյունահեղությունը: Դիմելով զորավարին՝ նա գրում է. «Արդ երդվեցնում եմ քեզ կենդանի Աստուծով և դաշինք եմ կնքում քեզ

¹² Ղևոնդ, Պատմություն, էջ 32:

¹³ Նշվ. աշխ., էջ 33:

¹⁴ Նշվ. աշխ., էջ 35:

հետ ըստ ձեր նախահայր Իսմայելի հետ Աստուծո կնքած ուխտի... որպեսզի իմ ժողովրդին խաղաղություն տաս, և նա կհպատակվի քեզ հարկատվությամբ»¹⁵: Եվ խնդրում է դավանանքի ազատություն՝ պնդելով, որ այդ դեպքում «Տերը կամրապնդի քո իշխանությունը... Իսկ եթե չկամենաս լսել իմ խոսքերը... Տերը քո մտադրությունը կցրի, քո ոտքերի ընթացքը չի հաստատի ու քո գորքի սիրտը շուռ կտա, որպեսզի չկատարեն քո կամքը»¹⁶:

Այդ նամակը ցնցող տպավորություն է գործում արաբ գորավարի վրա, որին ապշեցնում է հայոց հովվապետի աննկուն ոգին և հայրենասիրությունը: Եվ նա, ծնկաչոքելով կաթողիկոսի մարմնի մոտ, բռնում է նրա ձեռքը և ասում, որ ճանաչել է նրա իմաստությունը այս նամակից, «քանզի ըստ օրենքի, որպես քաջ հովիվ, հոգալով քո հոտի մասին, փութացիր ընդառաջ գալ իմ խրոխտացող սրին: Համաձայն եմ սուրբ ետ պահել անմեղ մարդկանցից»¹⁷: Մուհամմադ իբն Մրվան գորավարը (Հովհաննես Դրասխանակերտցու մոտ՝ Ոկբան), ընդառաջելով հայոց հովվապետի թախանձանքին, գրավոր երդմնագիր է տալիս հայոց կաթողիկոսի հետ ժամանած եպիսկոպոսներին: Այդ երդմնագիրը, ամենայն հավանականությամբ, հայերի կրոնական դավանանքի ազատությունը երաշխավորող փաստաթուղթ էր: Ղևոնդը գրում է, որ երբ հայերը տեսան «երդման ու խոստումի գրավոր խոսքը, հավատացին նրան»: Այս պայմանագիրը հայկական մատենագրության մեջ հայտնի է «Փոքր Մանշուր» (հրովարտակ) անունով:

Պատմական վերոհիշյալ դեպքերին ու անցքերին են անդրադարձել նաև միջնադարյան մյուս հայ պատմագիրները՝

¹⁵ Նշվ. աշխ., էջ 36:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում:

Ստեփանոս Ասողիկը, Մամուել Անեցին, Մխիթար Անեցին, Վարդան Արևելցին, Կիրակոս Գանձակեցին՝ աղբյուր ունենալով Ղևոնդին և Հովհաննես Դրավխանակերտցուն:

Այսպես, պատմական վերոհիշյալ դեպքերը՝ կապված Սահակ կաթողիկոսի հետ, հետագայի փաստաթղթերում ենթարկվել են որոշակի փոփոխությունների: «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոյ Յակոբեանց» աշխատության մեջ ևս քննության են առնված և նկարագրված են Սահակ կաթողիկոսի ճամփորդությունը դեպի Հարրան, մահը, նրա կողմից Մուհամմադ գորավարին ուղղված նամակը: Այս փաստաթղթում նշվում է. «Իսկ Մուհամատ դարձեալ ի միւսում ամին ժողովեալ զաւրս բագում կամեր ելանել ի յաշխարն Հայոց, իսկ իշխանն Հայոց Թեոդորոս Ռշտունի եկեալ անկաւ ի առաջի Սրբոյ Հայրապետին Սահակայ»¹⁸: Ինչպես տեսնում ենք, այս փաստաթղթում Սահակ կաթողիկոսը ոչ թե նախարարների, այլ հայոց իշխան Թեոդորոս Ռշտունու թախանձանքով է որոշում գնալ արաբ գորավարին ընդառաջ, մինչդեռ ակնհայտ է, որ այդ ժամանակաշրջանում Ռշտունին արդեն չկար, միգուցե նրա անունն ու խոսքերը հավելվել են այս անցքերին՝ է՛լ ավելի մեծ հանդիսավորություն և պատկառանք հաղորդելու նշյալ դեպքերին: Այստեղ ևս հիշատակվում է Մահմեդի (իմա՝ Մուհամմադ մարգարեի) տված գրի մասին, որը Սահակ կաթողիկոսը պետք է ներկայացներ արաբ գորավարին: Հիշատակվում է, որ Հայոց աշխարհը պետք է հարկատու լիներ նրան, որն իր հերթին պետք է հոգ տաներ և պաշտպաններ հայերին և եթե գորավարը կատարեր այդ պայմանները, ապա Աստծո և նրա հայր Իսմայելի օրհնությունը կլինեն նրա հետ, հակառակ դեպքում «դարձուսցէ Տէր Աստուած զսիրտ միաբանել այդ ընդ քեզ, և մի ուղղեսցին գնացք ոտից քոյ և նկուն արասցէ Տէր Աստուած զքեզ

¹⁸ Մայր ցուցակ ձեռագրաց սրբոյ Յակոբեանց, հ. I, Երուսաղեմ, 1966, էջ 17:

առաջի թշնամեաց, ձեռք արանց պատերազմողաց քոյ թուլասցին, և աղեղունք դոցա փշրեսցին»¹⁹:

Եվ իրոք, անգնահատելի են Սահակ Ձորափորեցի կաթողիկոսի ծառայությունները, որը, «երկար պաշտոնավարութենէ յօգնած, բազմապիսի փորձանքներէ անցած, ներքին և արտաքին վիշտերով տազնապած, աքսորներով և բանտարկութիւններով տկարացած», Դամասկոսից շտապում է դէպի Հայաստան, քանի դեռ Ոկրայի վրիժառու բանակը Հայաստան չէր հասել: Մեծ է նաև կաթողիկոսի կողմից արաբերենով գրված նամակի արժեքը, որն ընթերցելուց հետո Ոկրան «կյուզուի իբրեւ թէ անդիի աշխարհքէ խորհրդաւոր պատգամ մը լսէր: Նամակին խորհրդաւոր օրհնութիւնները ի սպառնալիքները խորին տպաւորութիւն կը գործեն կարծես երկնային ձայն մը Հայոց հավատարմութեն երաշխաւոր ըլլար, այնչափ վստահօրէն կը համոզուի Ոկրայ անոնց անխարդախ հպատակութեան վրայ»: Սահակ կաթողիկոսը նաև լավագույն արաբագետ էր, որի գրած նամակը «ոճի վեհութեան հետ արաբագիտութեն առաւելութիւնն ալ կը հաստատէ, քանի որ Սա-հակ իր ձեռքով գրեց և Ոկրայ ինքնին ընթերցաւ զգիրն»²⁰:

«Փոքր Մանշուրի»՝ միայն կրոնական ազատության վերաբերյալ բովանդակություն ունենալը կարելի է բացատրել հենց Սահակ կաթողիկոսի անձով, որը, լինելով Հայաստանի հոգևոր առաջնորդը, իր վրա է վերցնում նաև երկրի քաղաքական առաջնորդի դերը՝ ընդառաջ գնալով արաբ զորավարին, որ նրա հետ հաշտություն կնքի համայն հայության կողմից: Եվ արաբ զորավարի կողմից հայ բնակչությանը տրված այդ պայմանագիրը

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Նույն տեղում:

«Փոքր Մանշուրը» թերևս նաև հարգանքի և ակնածանքի մի յուրօրինակ տուրք էր հայոց կաթողիկոսին:

Սահակ Չորափորեցի կաթողիկոսի կողմից արաբների հետ Հայաստանի և մասնավորապես՝ հայոց եկեղեցու շահերին միտված քաղաքականությունը դրվեց նաև հայոց կաթողիկոս Հովհաննես Օձնեցու (717-728 թթ.) գործունեության հիմքում: Նա Տաշիրք գավառի Օձուն գյուղից էր, ստացել էր հունական կրթություն և հռչակվել իր իմաստասիրությամբ: Հայ պատմիչները գրում են, որ նա տեսքով վայելչակազմ էր, թիկնավետ, նա «խիստ գեղեցիկ էր տեսքով. կրում էր այծենի զգեստներ, որի վրայից էլ պայծառերանգ նյութերով օծված հագուստներով պճնազարդվում էր եւ խարտոցով աղացած ոսկու մանրափոշին՝ անուշահամ յուղերով օծված, փչում էր ծաղկազարդ ալիքներով մորուքին»²¹: Արմինիա նահանգի ոստիկան Վալիդը (հայ պատմագիրների մոտ՝ Վլիթ) կաթողիկոսի վարքի մասին պատմում է Օմար II Օմայան խալիֆային, որը ցանկություն է հայտնում տեսնել հայոց հովվապետին: Կաթողիկոսը փառավոր կերպով հագնվում է՝ խորին տպավորություն թողնելով խալիֆայի վրա, իր «փայլուն եւ պաղպաջուն զգեստիք պճնաւորեալ... եւ զոսկի անկար գաւազանն որի փայտից ոպնիազից ի ձեռն առեալ»²²: Օմար II խալիֆան հրամայում է աթոռ բերել կաթողիկոսի համար՝ ասելով, որ գիտի Հիսուսի մասին, որը հեզ էր, խոնարհ, սիրում էր աղքատությունը, մինչդեռ հայոց կաթողիկոսը գեղեցիկ շորերով է պճնվել: Խալիֆան շատ է զարմանում կաթողիկոսի իմաստուն պատասխանից, երբ վերջինս ասում է, որ Քրիստոսին ու իր աշակերտներին տրված էր հրաշք գործելու կարողությունը, որով էլ նրանք ազդում էին մարդկանց վրա և ավելացնում, որ «մենք այդ միջոցները չունինք եւ պարտաւոր ենք գործածել այն արտաքին

²¹ Ստեփանոս Ասողիկ, Տիեզերական պատմություն, Երևան, 2000, էջ 148-149:

²² Հովհաննես Դրցասխանակերտեցիոյ պատմութիւն հայոց, Մոսկվա, 1853, էջ 156:

նշանները, որոնցմով բոլոր աշխարհք կը վարուի»²³ դրա համար էլ թագավորները ծիրանի են հագնում: Եվ նա խալիֆային ցույց է տալիս իր շքեղ շորերի տակ «զցփսիսն այծեայս»: Ցնցված այս պատասխանից՝ խալիֆան, ինչպես գրում են հայ պատմիչները, ցանկանում է կատարել կաթողիկոսի բոլոր խնդրանքները: Հովհաննես Օձնեցիի հայտնում է երեք ցանկություն. դավանանքի ազատությունն տալ քրիստոնյաներին, չստիպելով նրանց դավանափոխ լինել, եկեղեցին ազատել հարկերից, քրիստոնյաներին պաշտամունքի արարողությունների ազատություն տալ խալիֆայության բոլոր կողմերում: Այս ամենի վերաբերյալ կաթողիկոսը գրություն է խնդրում խալիֆայից: Օմարը «հրամաեաց գրել զիր ըստ խնդրոյ նորա, և կնքեաց մատանեաւ իւրով, եւ ետ նմա և առաքեաց մեծաւ պատուով յաշխարհս Հայոց»²⁴: Օմար խալիֆայի մասին Ղևոնդը գրում է, որ նա «ազնվագույն էր, քան իր ազգատոհմի բոլոր մարդիկ» և որ նա Հայաստան վերադարձրեց այն բոլոր գերյալներին, «որոնց Մահմետը հայոց աշխարհից գերել էր՝ մեր երկրի նախարարներին այրելուց հետո» և «երբ... Օմարը իշխանության մեջ հաստատվեց, ազատ արձակեց բովանդակ գերիներին...»²⁵: Անշուշտ, այդ գերյալները 705 թ. Նախիջևանի և Խրամի կոտորածներից հետո գերված հայ նախարարներն էին, և, ամենայն հավանականությամբ, Հովհաննես Օձնեցու հետ հանդիպումից հետո է խալիֆան հայոց գերյալներին բաց թողել: Մինչդեռ Օմար II խալիֆան հայտնի էր ոչ մուսուլման բնակչության նկատմամբ իր հալածանքներով, և նա է եղել առաջին խալիֆան, ով սահմանափակումներ է դրել

²³ Նշվ. աշխ. , էջ 159:

²⁴ Կիրակոս վարդապետի Գանձակեցից համառոտ պատմություն, Վենետիկ, 1869, էջ 38:

²⁵ Ղևոնդ, Պատմություն, էջ 44-45:

քրիստոնյաների իրավունքների վրա²⁶: Վերադառնալով Հայաստան՝ հայոց կաթողիկոսը սկսում է իր հակահունական ձեռնարկումները՝ ձգտելով խզել իր կապերը հույների հետ և մերձենալ արաբներին: Կիրակոս Գանձակեցին հիշատակում է, որ Օմար II-ն հայոց կաթողիկոսի հետ գորք էր ուղարկել Հայաստան, որի օգնությամբ երկրից արտաքսվեցին բյուզանդացիները՝ Հայաստանում թողնելով իրենց ունեցվածքը²⁷: Կրոնական տեսակետից Հովհաննես Օձնեցին հետապնդեց քաղկեդոնական եկեղեցու հետևորդներին, որոնք մուսք էին գործել Հայաստան բյուզանդական տիրապետության շրջանում: Դամասկոսից վերադառնալուց հետո՝ 719 թ. -ին, Օձնեցին Դվինում եկեղեցական ժողով գումարեց, որի նպատակն էր պայքարել հայոց եկեղեցու հակառակորդների դեմ և ուժեղացնել այն: Նա համակարգեց և հավաքեց տիեզերական և հայոց եկեղեցու բազմաթիվ կանոններ, որոնց ամբողջությունը կոչվեց «Կանոնագիրք Հայոց»: Ըստ կանոնագրքի, եկեղեցին էր դառնում այն ինստիտուտը, որը կոչված էր կարգավորելու հայերի կյանքը՝ գործ չունենալով, սակայն, երկրի կառավարման հետ:

Օմար II-ի կողմից հայերին տրված պայմանագիրը հաստատում էր Սահակ Չորսփորեցուն Մուհամմադ իբն Մրվան գորավարի կողմից տրված դաշնագիրը:

Հայոց պատմիչները գրում են, որ երբ արաբ Վասիդ իշխանը հիվանդացավ, և բժիշկները անգոր եղան նրան բուժել, հենց Հովհաննես Օձնեցի կաթողիկոսի աղոթքների շնորհիվ արաբ իշխանը ոտքի կանգնեց, «հաւատաց և մեր ուղղափառութիւն, Հայաստան մնաց, եւ Հռոմայր կոչուած տեղը 15 տարի ճգնելով

²⁶ Hitti Ph., History of the Arabs, Ind., Macmillan, 1946, p. 234.

²⁷ Նույն տեղում :

վախճանեցաւ»²⁸: Հայոց հովվապետը որոշում է վերջ տալ Հայաստանի՝ երկու տերությունների արանքում հարմարվելու և քաղաքական հեռանկարի առումով անորոշ վիճակին: Արդեն ակնհայտ էր Արաբական խալիֆայության գերազանցությունը Բյուզանդիայի հանդեպ և «հայոց կաթողիկոսը վճռում է ավարտին հասցնել իր նախորդների վեհերոտ մտադրությունները՝ եկեղեցու դիրքերն ամրապնդելու համար դաշինքի մեջ մտնել Արաբական Խալիֆայության հետ»²⁹:

Հայաստանի համար դժվարին մի ժամանակաշրջանում հայոց կաթողիկոսը ստանձնեց երկրի ղեկավարի դժվար և պատասխանատու դերը և վավերացրեց իր հավատարմությունը իսլամի մարգարե Մուհամմադի հետ հայերի կնքած դաշինքին, որի վառ օրինակն է մուսուլմանական տիրապետության տակ Երուսաղեմի հայոց համայնքի կարգավիճակը սահմանող դաշնագիրը:

Այսպիսով, հայոց երեք կաթողիկոսների գործունեությունը ընթացել է Հայաստանում արաբական նվաճումների և տիրապետության հաստատման շրջանում: Նրանք, կարելի է ասել, հունական, քրիստոնեական ազդեցության կրողներ էին, սակայն կարողացան հետագայում, հայ ժողովրդի համար պատմական ծանր ժամանակաշրջանում ճիշտ կողմնորոշվել արաբաբյուզանդական հարաբերությունների բարդ լաբրինթոսում՝ ձգտելով հնարավորինս իրենց գործունեությամբ, վարքով օգտակար լինել հայոց եկեղեցուն և անվտանգ կեցություն ապահովել իրենց ժողովրդի համար Արաբական խալիֆայության իշխանության ներքո:

²⁸ Օրմանյան Մ., Ազգապատում, հ.Ա, էջ 963, Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, Երևան, 2001, էջ 111-112:

²⁹ Դավթյան Հ. Հայոց պատմական հնարավորությունները VI –VIII դարերում, Երևան, 2010, էջ 236:

ARMENIAN CHURCH IN THE MIDST OF THE ARMENIAN-ARAB RELATIONS

Summary

Gayane Mkrtumyan

mkrtumyangayane@rumbler.ru

Keywords *Armenian Church, the peace negotiations, expansionist policy, freedom of religion, a written vow, to free the Church from taxation, limitation of rights of Christians, the pact.*

We study the effective role of the Armenian Church in the period of the Arab conquest and the establishment of their control, when the Armenian Catholicos, adopting the role of the leader of the country, first of all was defending the benefits of the country. The article applies the pro-state activities of the Catholicoses Nerses G. Tayetsi, Sahak Dzoroporetsi, Hovhannes Odznetsi who often risked their lives protecting the country from disasters.

АРМЯНСКАЯ ЦЕРКОВЬ В ЭПИЦЕНТРЕ АРМЯНО-АРАБСКИХ ОТНОШЕНИЙ

Резюме

Гаяне Мкртумян

mkrtumyangayane@rumbler.ru

Ключевые слова *Армянская церковь, мирные переговоры, экспансионистская политика, свобода вероисповедания, письменная клятва, освободить церковь от налогов, ограничение прав христиан, пакт.*

В статье изучается действенная роль Армянской церкви в период арабских завоеваний и установления их власти, когда армянский католикос, приняв роль руководителя страны, в первую очередь защищал блага страны. В статье касаемся прогосударственной деятельности католикосов Нерсеса Г. Тайеци, Саака Дзоропореци, Оганеса Одзнеци, которые очень часто рисковали своей жизнью, оберегая страну от бедствий.